Քանոնը բշխածները

BookMark

Margaret Mitchell

Gone with the wind

A Novel

Volume 2

BookMark

Մարգարետ Միտչել

Քանուց բշխածները

Վեպ

Հատոր երկրորդ

Թարգմանությունն անգլերենից՝
Անուշ Սեդրակյանի

ԵՐԵՎԱՆ
2021

BookMark

ՀՏԴ 821.111(73)-31 Միտչել
ԳՄԴ 84(7ԱՄՆ)-44
Մ 756

Միտչել Մարգարետ
Մ 756 Քամուց քշվածները: Վեպ / Մ. Միտչել; Թարգմանությունն անգլերենից՝ Ա. Սեդրակյանի.-Եր.: Newmag, 2021. Հատոր երկրորդ.- 632 էջ:

1936 թվականին հրատարակումից ի վեր Պուլիցերյան մրցանակակիր և բոլոր ժամանակների ամենավաճառվող վեպերից մեկը՝ «Քամուց քշվածները», աշխարհում հռչակվել է Մեծ ամերիկյան վեպ:

Վեպի առավել տարածմանը նպաստել է նաև համանուն ֆիլմը: «Քամուց քշվածները» վեպը մարդկանց կրքերի խորությունն ուսումնասիրում է Ջորջիայի կարմիր բլուրներում տեղի ունեցող դեպքերին բնորոշ հանդգնությամբ: Հիասքանչ պատում է, որը վառ պատկերում է Քաղաքացիական պատերազմի և Վերակառուցման ժամանակաշրջանի դրաման:

Հարուստ կալվածատիրոջ քմահաճ դուստր Սքարլեթ Օ'Հարան հասունանում է ճիշտ այն ժամանակ, երբ Քաղաքացիական պատերազմն ընդմիշտ փոխում է շատերի ու նրա կյանքը: Կրքերի և խիզախության մասին այդ ընդգրկուն պատմության էջերում Մարգարետ Միտչելը ստեղծել է անմոռանալի կերպարներ, որոնք գրեթե մեկ դար պարուրել են ընթերցողի սիրտն ու միտքը:

ՀՏԴ 821.111(73)-31 Միտչել
ԳՄԴ 84(7ԱՄՆ)-44

Գրքի գլխավոր գործընկեր
«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ
www.ena.am

ISBN 978-9939-884-38-7
Copyright © 1936 by The Macmillan Company
Copyright renewed©1964 by Stephens Mitchell and Trust Company of Georgia as Executors of Margaret Mitchell Marsh. Copyright renewed©1964 by Stephens Mitchell.

Այս գրքի հայերեն թարգմանության և հրատարակության իրավունքները պատկանում են «Նյու Մեգ» ՍՊԸ-ին:

Մաս չորրորդ

BookMark

Գլուխ 31

Հունվարյան մի ցուրտ օր, 1866 թվականին, Սքարլեթը պատուհանի մոտ նստած երկար նամակ էր գրում մորաքույր Փիթիին՝ հերթական անգամ մանրամասն բացատրելով, թե ինչու ո՛չ ինքը, ո՛չ Մելանին և ո՛չ էլ Էշլին չեն կարող գնալ Ատլանտա և ապրել նրա հետ: Նա շատ արագ էր գրում, որովհետև գիտեր, որ առաջին տողերը կարդալուց հետո մորաքույրը հերթական պատասխան նամակն է ուղարկելու, որտեղ բողոքելու է մենակ մնալու իր վախերից:

Ձեռքերը սառել էին, և Սքարլեթը տրորեց ափերը՝ փորձելով ոտքերը տեղավորել կոշիկի տեղ ծառայող կտորի հին ծածկոցի մեջ: Կոշիկների ներբանները մաշվել էին, իսկ որպես կրունկ ծառայում էին գորգից կտրված ներդիրները, որոնք, ճիշտ է, չէին թողնում՝ աղջկա ոտքերը դիպչեն հատակին, բայց չէին էլ տաքացնում: Այդ օրն առավոտյան Ուիլլը ձին տարել էր Ջոնզբորո պայտելու, և Սքարլեթը թախիծով մտածեց, որ անգամ ձիերը կոշիկներ ունեն, մինչդեռ մարդիկ բակային շների պես ստիպված են բոբիկ շրջել:

Նա, ձեռքը վերցնելով փետուրը, ցանկացավ շարունակել գրելը, բայց կանգ առավ՝ հետնամուտքից լսելով Ուիլլի քայլերի ձայնը: Հյուրասենյակից լսվեց նրա փայտե ոտքի դմփդմփոցը, նա կանգ առավ Սքարլեթի աշխատասենյակի դռան մոտ: Սքարլեթը մի փոքր էլ սպասեց նրա ներս մտնելուն և շարժ չզգալով ձայն տվեց: Տղան ներս մտավ, ականջները ցրտից կարմրել էին, շեկ մազերն իրար էին խառնվել: Կանգնեց և կատակախառն ժպիտով նայեց Սքարլեթին:

— Մի՛սս Սքարլեթ,– հարցրեց,– որքա՞ն կանխիկ փող ունեք:

— Դուք որոշել եք շահադիտական նպատակներով ամուսնանա՞լ ինձ հետ,– կեղծ վրդովմունքով հարցրեց Սքարլեթը:

— Ո՛չ, մե՛մ, պարզապես ուզում եմ իմանալ:

Սքարլեթը քննախույզ նայեց Ուիլլին: Նա լուրջ տեսք չուներ, թեպետ երբեք էլ այդպիսին չէր եղել:

— 10 դոլար ոսկով,– պատասխանեց,– այն ամենը, ինչ մնացել է սպանված յանկիի փողից:

— Այդքանը կբավականացնի:

— Ինչի՞ն:

— Հարկերը վճարելուն,– Ուիլլը ծանրորեն նստեց բուխարու մոտ և սառած մատները պարզեց կրակի կողմը:

— Ի՞նչ հարկեր, Ուի՛լլ, ի սեր Աստծո, հարկերն արդեն վճարել ենք:

— Այո, մե՛մ, բայց այսօր Ջոնզբորոյում խոսում էին, որ այդքանը բավական չէ:

— Չեմ հասկանում, Ուի՛լլ, ի՞նչ է այդ ամենը նշանակում:

— Ես հասկանում եմ, որ Դուք մեծ բեռ եք տանում Ձեր ուսերին, մի՛սս Սքարլեթ, և չէի ուզենա այն ավելացնել, բայց ստիպված եմ նախազգուշացնել: Ասում են, որ դարձյալ պիտի հարկ վճարեք: Նրանք հաշվարկել են, որ Տառան կոմության ամենաեկամտաբեր ագարակն է, կարծում եմ:

— Բայց ինչո՞ւ պիտի վճարենք, եթե մի անգամ արդեն վճարել ենք:

— Մի՛սս Սքարլեթ, Դուք հազվադեպ եք լինում Ջոնզբորոյում, ինչի համար ուրախ եմ, քանի որ այնտեղ կնոջ գնալու տեղ չէ: Բայց եթե հաճախ լինեիք այնտեղ, կիմանայիք, որ ստորաքարշների*, հանրապետականների և խուրջինավորների** խմբերն են հիմա տնօրինում բոլոր գործերը: Նրանք ահավոր բաներ են անում, որ Ձեզ հաստատ կբարկացնեն, Դուք կտեսնեք, թե ոնց են նեգրերը հրմշտում սպիտակներին, մայթերից գցում և...

— Բայց դա ի՞նչ կապ ունի մեր հարկերի հետ:

— Քիչ-քիչ մոտենում եմ բուն խնդրին, մի՛սս Սքարլեթ: Այդ սրիկաները բարձրացրել են մեր հարկերի դրույքները, կարծես Տառան հսկայական մի կալվածք լինի: Ես այսուայնկողմ ընկա, նորություններ հավաքեցի ու իմացա, որ ինչ-որ մեկն աճուրդի ժամանակ ուզում է էժան գնով ձեռք բե-

---

* Ստորաքարշներ (Scallawags) անվանել են սպիտակամորթ հարավցիներին, որոնք սատարում էին Վերակառուցման քաղաքականությունը: Բառը գործածվել է որպես վիրավորական արտահայտություն: (Ծանոթագրությունները՝ **new**mag-ի):

** Խուրջինավորները (Carpetbaggers) Հարավում ազատ արձակված սևամորթներն ու սպիտակ հարավցիներն էին, որոնք համակրում էին հանրապետականներին: Նրանք միավորեցին իրենց ուժերը Հյուսիսի հետ և շարժվեցին Հարավ, որպեսզի պաշտպանեն հանրապետական կուսակցությանը:

րել մեր ագարակը, եթե հավելյալ հարկերը չվճարեք: Բոլորը վստահ են, որ չեք կարող վճարել: Դեռ հաստատ չգիտեմ, թե ով է աչք տնկել Տառայի վրա, դեռևս չհաջողվեց պարզել, բայց կարծում եմ՝ այդ գարշելի անտառահատ Հիլթոնն է՝ միսս Քեթլինի ամուսինը, որովհետև նա անդուր ծիծաղեց, երբ փորձեցի նրանից մի բան կորզել:

Ուիլլը նստեց բազմոցին և սկսեց տրորել անդամատված ոտքը, որը ցուրտ եղանակներին ցավում էր, իսկ փայտյա անհարմար պրոթեզը նեղում էր: Սքարլեթը կատաղած նայեց նրան: Ինչպե՞ս է նա համարձակվում արտասանել Տառայի դատավճիռը նման տոնով: Եթե շերիֆի աճուրդի ժամանակ Տառան գնեն, ո՞ւր են գնալու իրենք: Անհնար է անգամ պատկերացնել, որ Տառան կարող է պատկանել մեկ ուրիշի:

Սքարլեթն այնքան էր զբաղված ագարակը շենացնելու գործով, որ նրա ուշադրությունից վրիպել էին աշխարհում կատարվող իրադարձությունները: Ուիլլն ու Էշլին այժմ զբաղվում էին Զոնզբորոյի և Ֆայեթվիլի ընթացիկ հարցերով, և Սքարլեթը հազվադեպ էր լքում պլանտացիան: Ժամանակին նա ականջի ծայրով էր լսում հոր երկար-բարակ զրույցները պատերազմի մասին, այժմ էլ նույնպիսի անուշադրությամբ լսում էր Էշլիի և Ուիլլի քննարկումները սպասվող Վերակառուցման* շուրջ:

Իհարկե, նա գիտեր ստորաքարշ հարավցիների մասին, որոնք արագ դարձան հանրապետական, և խուրջինավորներ յանկիների, այսինքն՝ հյուսիսաբնակների մասին, որոնք մորեխների նման գրավել էին Հարավը՝ գորգից կարված ուսապարկերով, որոնք նրանց միակ սեփականությունն էին: Նա մի քանի անգամ անախորժ միջադեպեր էր ունեցել «Ազատագրված մարդկանց» գրասենյակի հետ: Նաև տեղյակ էր, որ ազատագրված նեգրերից ոմանք դարձել էին չափազանց անհարգալից սպիտակների հանդեպ: Այդ լուրերին Սքարլեթը գրեթե չէր հավատում, որովհետև կյանքում ամբարտավան նեգր չէր տեսել:

Անհանգստանալու շատ բան կար, սակայն Ուիլլն ու Էշլին փոխադարձ պայմանավորվածությամբ թաքցնում էին վերջին լուրերը: Պատերազմի

---

* Վերակառուցում – Ամերիկայի քաղաքացիական պատերազմին (Հյուսիսի և Հարավի պատերազմ) հաջորդող ժամանակահատվածը (1865-77), երբ Համադաշնության հարավային նահանգները վերամիավորվեցին, ամբողջ երկրում ստրկատիրությունը վերացվեց: Վերականգնվեց ազգային միասնությունը, կառավարության կողմից քաղաքական և քաղաքացիական իրավունքներ տրվեցին ազատագրված սևամորթներին, փոխվեցին Սահմանադրությունը և Դաշնային օրենքները:

արհավիրքին հաջորդել էր Վերակառուցման ծանր շրջանը, սակայն տղամարդիկ որոշել էին մտահոգող խնդիրների մասին Սքարլեթի ներկայությամբ չխոսել: Երբեմն, երբ Սքարլեթը փորձում էր ունկնդրել նրանց զրույցները, շատ բաներ նրա մի ականջից մտնում, մյուսով դուրս էին գալիս:

Նա լսում էր Էշլիի խոսքերն այն մասին, որ նվաճողները Հարավը համարում են իրենց գաղութը և քաղաքական հարցերում առաջնորդվում են վրեժխնդրությամբ: Բայց այդ ամենը Սքարլեթի համար ոչինչ չէր նշանակում, քանի որ, ըստ նրա, քաղաքականությունը տղամարդկանց զբաղմունք է: Ուիլլը համարում էր, որ Հյուսիսն անում է ամեն ինչ, որ Հարավն այլևս չկարողանա ոտքի կանգնել: «Տղամարդիկ,– մտածում էր Սքարլեթը,– միշտ մի տխմար պատճառ կգտնեն անհանգստանալու»: Յանկիներն իրեն վնաս չէին տվել, և նա վստահ էր, որ այդպես էլ կշարունակվի: Պետք է օրնիբուն տքնաջան աշխատել և չմտածել յանկիների կառավարության մասին: Ի վերջո, պատերազմն ավարտվել է:

Սքարլեթը չէր հասկանում, որ խաղի կանոնները փոխվել են, և ազնիվ աշխատանքն այլևս հարգի չէ: Ջորջիայում գործում էին պատերազմական օրենքները, յանկիների պահեստազորը տեղակայված էր նահանգում, իսկ «Ազատագրված մարդկանց» գրասենյակը տնօրինում էր ամեն ինչ և ընդունում միայն իր համար բարենպաստ օրենքներ:

Գրասենյակը կազմավորվել էր նախկին Դաշնային կառավարության օրոք, և այդ կառույցի հիմնական նպատակն էր հոգ տանել գործազուրկ և ազատությամբ ոգևորված նախկին ստրուկների մասին, որոնք հազարներով եկել էին ագարակներից, գյուղերից և քաղաքներից: Գրասենյակը պարապուրդի մատնված մարդկանց ուտելիք էր տրամադրում և նրանց մեջ նախկին տերերի հանդեպ ատելություն սերմանում: Ջերալդի նախկին վերակացուն՝ Ջոնաս Ուիլկերսոնը, տեղական գրասենյակի ղեկավարն էր, իսկ Ջեթլին Ջոլվերտի ամուսին Հիլթոնը՝ նրա օգնականը: Այդ երկուսը ջանասիրաբար լուրեր էին տարածում, որ հարավականներն ու դեմոկրատները պատրաստվում են կրկին ստրկացնել նեգրերին, և նման ճակատագրից խուսափելու միակ հնարավորությունը գրասենյակի և Հանրապետական կուսակցության պաշտպանությանն ապավինելն է:

Ամեն ինչից զատ Հիլթոնն ու Ուիլկերսոնը նաև համոզում էին նեգրերին, որ նրանք սպիտակներին հավասար մարդիկ են, որ շուտով թույլ կտան ամուսնություններ սպիտակների և սևերի միջև, որ շուտով իրենց տերերի

ագարակները կմասնատեն հողակտորների, և յուրաքանչյուր սևամորթ կստանա իր հողաբաժինը ջորու հետ միասին: Նրանք նեգրերի մեջ խառնակչություն էին գցում սպիտակների դաժանության մասին պատմություններով, և ստրուկների և տերերի՝ նախկինում ջերմ հարաբերությունները դառնում էին ատելի և կասկածներով լեցուն:

Գրասենյակը զինվորների և աշխարհազորայինների պաշտպանության տակ ընդունում և իրացնում էր իրարամերժ օրենքներ՝ նվաճված բնակչությանը խաղի սեփական կանոնները թելադրելու համար: Մարդկանց նույնիսկ կարող էին բանտարկել, երբ նրանք փորձում էին հակառակվել գրասենյակի աշխատողների ասածներին: Դպրոցների, սանիհգիենիկ իրավիճակի, ապրանքների առուվաճառքի, անգամ կոստյումի վրա կարվող կոճակների վերաբերյալ ընդունվում էին ռազմական օրենքներ, և Ուիլկերսոնն ու Հիլթոնը կարող էին խառնվել Սքարլեթի բոլոր առևտրային գործարքներին, անգամ սահմանել սեփական գները:

Բարեբախտաբար Սքարլեթը քիչ էր շփվում այդ երկուսի հետ, որովհետև Ուիլլը նրան համոզել էր առևտրական գործարքները թողնել իր հայեցողությանն ու զբաղվել պլանտացիայով: Իր խաղաղ բնավորության շնորհիվ Ուիլլը կարողանում էր հարթել կնճռոտ հարցերը՝ առանց դրանց մասին Սքարլեթին տեղյակ պահելու: Ուիլլը լեզու էր գտնում նաև խուրջինավորների և յանկիների հետ, եթե ստիպված էր լինում: Բայց այժմ մի հարց էր առաջացել, որն այնքան էլ հեշտ լուծվող չէր: Սքարլեթը պետք է տեղյակ լիներ լրացուցիչ գանձումների և Տառայի հնարավոր կորստի մասին:

Սքարլեթը բոցկլտացող աչքերով նայեց Ուիլլին.

— Օ՜հ, անիծյալ յանկիներ,– բացականչեց նա: — Այդքան մեզ կեղեքել են և թալանել, ժամանակը չէ՞, որ վերջ տան իրենց սրիկայություններին:

Պատերազմն ավարտված էր, խաղաղությունը՝ հաստատված, բայց յանկիներինն էին թալանելու, սովի մատնելու կամ տնից վտարելու բոլոր հնարավորությունները: Ի՜նչ հիմար էր նա, երբ կարծում էր, որ պետք է ընդամենը դիմանալ մինչև գարուն, և ամեն բան տեղը կընկնի: Ուիլլի բերած սարսափելի լուրը մի տարի տևած տքնաջան աշխատանքի և խորտակված հույսերի վերջին կաթիլն էր, որը լցրեց Սքարլեթի համբերության բաժակը:

— Օ՜հ, Ուի՛լլ, ես կարծում էի, թե պատերազմի ավարտի հետ մեր տառապանքները վերջացել են:

— Ո՛չ,– Ուիլլն իր քառակուսի ծնոտով դեմքն ուղղեց դեպի Սքարլեթը և ուշադիր նայեց նրա աչքերին: — Մեր դժվարությունները նոր են սկսվում:

— Որքա՞ն փող են ուզում մեզնից:

— 300 դոլար:

Այդ հարվածից Սքարլեթը մի պահ կորցրեց խոսելու ունակությունը: Երեք հարյո՞ւր: Նույն հաջողությամբ կարող էին ասել՝ երեք միլիոն:

— Ինչո՞ւ,– կմկմաց նա,– ինչո՞ւ, ինչո՞ւ, ինչ-որ կերպ պիտի փող ճարենք:

— Այո, մե՛մ, ու երկնքից ծիածան իջեցնենք կամ էլ լուսին, անգամ երկու լուսին:

— Օ՜հ, Ուի՛լլ, միայն ոչ Տառան, նրանք չեն կարող...

Ուիլլի աչքերի սովորական խաղաղությունը փոխվեց դառը ատելության:

— Իսկ ինչո՞ւ չեն կարող: Կարող են, ուզում են և կանեն իրենց ուզածը: Մի՛սս Սքարլեթ, երկիրը շների բաժին է դառնում, կներեք արտահայտությանս համար: Խուրջինավորներն ու ստորաքարշները քվեարկելու իրավունք ունեն, իսկ դեմոկրատներից շատերը՝ ոչ: Եթե ինչ-որ դեմոկրատ 65 թվին հարկային գրառումներում 2000 դոլարից ավելի գույք ուներ, նա էլ քվեարկելու իրավունք չունի: Այսպիսով, Ձեր հայրը, միստր Թարլթոնը, Մակրաեսները և Ֆոնտեյն եղբայրները գործընթացից դուրս են մնում: Գնդապետները և պատերազմի մասնակիցները նույնպես քվեարկության իրավունք չունեն: Ձայնից զրկված են նաև նրանք, ովքեր Կոնֆեդերացիայի օրոք պետական պաշտոններ են զբաղեցրել: Այսպիսով, դուրս են թողնում բոլորին՝ նոտարներից մինչև դատավորներ: Յանկիներն այնպես են ձևակերպել համաներման օրենքը, որ պատերազմից առաջ իրենից ինչ-որ բան ներկայացնող ամեն մարդ այժմ զրկված է քվեարկելու իրավունքից: Խելացիները, հարուստներն ու արժանավոր մարդիկ փաստորեն լուսանցքից դուրս են մնացել:

— Հը՛մ, ես կարող էի քվեարկել, եթե տայի դրանց հիմար երդումը: Ես 65 թվին ոչինչ չեմ ունեցել, փող չունեմ, սպա չեմ ու ոչ էլ մի երևելի կերպար եմ: Բայց ես երդում տալու ոչ մի ցանկություն չունեմ: Եթե յանկիներն իրենց կարգին մարդու պես պահեին, միգուցե և ընդունեի հավատարմության երդումը, իսկ հիմա ոչ մի դեպքում: Ես կարող եմ միանալ Դաշնությանը, բայց չեմ ցանկանում մասնակցել այդ մեծ Վերակառուցմանը: Ապա մի նայեք, Հիլթոնի և Ուիլկերսոնի պես ստահակները կարող են քվեարկել, Սլեթերի թշվառականները և անպիտան Մակինտոշները՝ նույնպես: Հիմա

բոլոր լծակները նրանց ձեռքերում են: Եթե մտքներին դնեն տասնապատիկ հավելյալ հարկ գանձել Ձեզնից, այդպես էլ կանեն: Հիմա սևամորթը կարող է անպատիժ սպանել սպիտակ մարդուն կամ...,– նա շփոթված կանգ առավ՝ հիշելով, թե ինչ կատարվեց Լավջոյի հեռավոր ֆերմայում ապրող միայնակ կնոջ հետ: — Նեգրերն ամեն բան կարող են անել մեր գլխին: Ե՛վ «Ազատագրված մարդկանց» գրասենյակը, և՛ զինվորները կպաշտպանեն նրանց: Ու մենք ո՛չ ձայն հանելու իրավունք ունենք, ո՛չ էլ մի բան անելու հնարավորություն:

— Քվեարկե՛լ,– բացականչեց Սքարլեթը,– քվեարկե՛լ, ի՞նչ կապ ունի քվեարկությունն այս ամենի հետ, Ուի՛լլ: Մենք հիմա հարկերն ենք քննարկում, Ուի՛լլ, բոլորն էլ գիտեն՝ ինչ բարեբեր պլանտացիա է Տառան, ի վերջո, մենք կարող ենք այն գրավ դնել:

— Մի՛սս Սքարլեթ, Դուք բնավ հիմար չեք, բայց մեկ-մեկ անմիտ բաներ եք ասում: Ո՞վ փող ունի, որ Ձեզ գրավի դիմաց պարտքով տա, իհարկե, խուրջինավորներից բացի, որոնք էլ փորձում են ագարակը վերցնել Ձեր ձեռքից: Բոլորն էլ հողերի տեր են, հողը բարիք է տալիս, այն կորցնել չի կարելի:

— Ես ադամանդե ականջօղեր ունեմ յանկիից վերցրած: Կարելի է դրա դիմաց ինչ-որ գումար ստանալ:

— Մի՛սս Սքարլեթ, ո՞վ փող ունի զարդեղենի համար: Մարդիկ անգամ մսի փող չունեն, ինչո՞ւ պիտի ծախսեն զիզի-բիզի բաների վրա: Դուք գոնե 10 դոլար ունեք ոսկով, մարդիկ կան՝ դա էլ չունեն:

Լռություն տիրեց: Սքարլեթին դարձյալ թվաց, թե գլուխը հարվածում է քարե պատին: Անցյալ տարվանից նրան արգելքներ են շրջապատում, որոնք նա ստիպված է հաղթահարել:

— Ի՞նչ ենք անելու, մի՛սս Սքարլեթ:

— Չգիտեմ,– անտարբեր պատասխանեց Սքարլեթը՝ զգալով, որ իր պետքն էլ չէ: Հերթական արգելապատնեշը խոյացավ նրա առջև, և զգաց, որ հոգնածությունից անգամ ոսկորները սկսեցին տնքալ: Ինչո՞ւ է նա իրեն մաշելով գործում և պայքարում, եթե ամեն ջանքին հաջորդում է պարտություն, կարծես ճակատագիրը ծաղրում է իրեն:

— Դեռ չգիտեմ: Բայց հայրիկին ոչինչ չասես, նա կարող է հուզվել:

— Չեմ ասի:

— Ուրիշ մեկին բան ասե՞լ ես:

— Ո՛չ, ես ուղիղ եկա Ձեզ մոտ:

«Դե, իհարկե,– մտածեց Սքարլեթը,– վատ լուրերով բոլորը գալիս են ինձ մոտ, և ես սարսափելի հոգնել եմ այդ ամենից»:

— Իսկ որտե՞ղ է պարոն Վիլքսը: Գուցե նա էլ մի բան առաջարկի:

Ուիլլն իր հանգիստ հայացքը հառեց Սքարլեթի դեմքին, և աղջիկը զգաց, որ Էշլիի գալու առաջին օրից Ուիլլն ամեն ինչ հասկացել է:

— Նա այգում ճյուղերն է կտրատում: Երբ ձին կապում էի, նրա կացնի ձայնը լսեցի: Բայց նա մեզ պես փող չունի:

— Ինքս կորոշեմ՝ երբ խոսեմ նրա հետ,– կտրուկ ասաց Սքարլեթը: Նա ոտքի ելավ և ոտքերին կպած կտորը մի կողմ շպրտեց:

Ուիլլը ցույց չտվեց, որ վիրավորվել է, և, շարունակելով ձեռքերը շփել կրակի վրա, նկատեց.

— Դրսում խոնավ է, մի՛սս Սքարլեթ, ճիշտ կանեք՝ շալ վերցնեք:

Բայց Սքարլեթն առանց շալը վերցնելու շտապեց դուրս, որովհետև կարիք ուներ վայրկյան առաջ տեսնել Էշլիին և խոսել նրա հետ իր բոլոր մտահոգությունների մասին:

Ինչ բարեբախտություն կլիներ, եթե Էշլին մենակ լիներ: Նրա գալուց ի վեր Սքարլեթին դեռ չէր հաջողվել հետը մի բառ փոխանակել: Էշլին միշտ շրջապատված էր մարդկանցով, Մելանին էլ միշտ նրա կողքին էր և անընդհատ դիպչում էր ամուսնու թևքին՝ կարծես նրա ներկայության մեջ համոզվելու համար: Այդ մտերմիկ ժեստը Սքարլեթի մեջ ատելության փոթորիկ էր արթնացնում, որը պատերազմի տարիներին մեղմվել էր, որովհետև Սքարլեթը կարծում էր, թե Էշլին մահացել է: Այժմ Սքարլեթը վճռական էր տրամադրված, պիտի դեմառդեմ խոսի Էշլիի հետ, և ոչ ոք ի զորու չէ իրեն խանգարել:

Նա անցավ այգու մերկացած թփերի մոտով, և մոլախոտերի ցողից ոտքերը թրջվեցին: Լսվում էր կացնի ձայնը: Էշլին կտրատում էր ճահճից դուրս բերած գերանները: Պետք էր նորոգել ցանկապատերը, որոնք յանկիները կրակի էին մատնել, իսկ դա ծանր գործ էր: Շուրջը եղած ամեն ինչ նորոգելու համար ջանք էր պահանջվում, նա հոգնել էր, սպառվել և ուժաթափվել: Եթե միայն Էշլին իր ամուսինը լիներ, ի՜նչ հաճելի կլիներ մոտենալ նրան, գլուխը դնել ուսին, հեկեկալ և նրան հանձնել իր վրա ծանրացած բեռը:

Նա շրջանցեց սառը քամուց դողացող մերկ ճյուղերով նռնենիների պուրակն ու տեսավ Էշլիին՝ կացնին հենված: Էշլին ափով սրբում էր ճակատի

քրտինքը, հագին իր հնամաշ, դարչնագույն շալվարի ցնցոտիներն էին և Ջերալդի վերնաշապիկներից մեկը: Դարսերով վերնաշապիկը, որը Ջերալդը հագնում էր միայն դատարան կամ հյուրասիրությունների գնալիս, շատ կարճ էր նրա համար: Էշլին քրտնել էր, բաճկոնը կախել ծառի ճյուղից, որովհետև շատ շոգ էր, և հանգստանում էր:

Տեսնելով Էշլիին ցնցոտիների մեջ, կացինը ձեռքին՝ Սքարլեթը սիրո ջերմ ալիք զգաց և միաժամանակ վրդովմունք անողոք ճակատագրի հանդեպ: Անտանելի էր նայել ցնցոտիավոր, աշխատանքային բեռի տակ կքած Էշլիին, որը միշտ այդքան անթերի և վայելուչ տեսք ուներ: Նրա ձեռքերը նախատեսված չէին կեղտոտ աշխատանքի համար, նրան կսազեին միայն նուրբ սպիտակեղենն ու անթերի հագուստը: Նախախնամությամբ նրան սահմանված էր նստել շքեղ հյուրասենյակում, զրուցել հետաքրքիր մարդկանց հետ, դաշնամուր նվագել և ստեղծագործել անիմաստ ու սիրուն բանաստեղծություններ:

Սեփական երեխայի բարուրի կտորից կարված շապիկը, կոպիտ կտավե զգեստներ հագած քույրերի տեսքը, Ուիլլի անխոնջ, տքնաջան աշխատանքը. այս ամենի հետ կարելի էր համակերպվել, բայց Էշլիի վիճակի հետ՝ երբեք: Նա անմեկնելիորեն հարազատ էր Սքարլեթին, նա արժանի չէր այս ծանր փորձություններին: Սքարլեթը սիրով ինքը կհատեր գերանները, եթե կարողանար դա անել Էշլիի փոխարեն:

— Ասում են՝ Աբրահամ Լինկոլն իր առաջին քայլերն արել է գերանները կտրատելով,– ասաց Էշլին, երբ Սքարլեթը մոտեցավ նրան: — Պատկերացրո՛ւ, թե ինչ բարձունքների կարող եմ հասնել:

Սքարլեթը խոժոռվեց: Էշլին միշտ կատակով էր խոսում իր դժվարությունների մասին: Սքարլեթը բոլոր իրադարձություններին շատ լուրջ էր վերաբերում, և երբեմն Էշլիի խոսքերը նյարդայնացնում էին նրան:

Նա համառոտ պատմեց Ուիլլի բերած նորությունների մասին և զգաց, որ այդ ամենն իրեն թեթևություն բերեց: Սքարլեթը վստահ էր, որ Էշլին կօգնի: Վերջինս ոչինչ չասաց, բայց, տեսնելով, որ Սքարլեթը դողում է, իր վերարկուն գցեց նրա ուսերին:

— Դե՛,– հարցրեց Սքարլեթը,– մտքովդ չի՞ անցնում, թե որտեղից կարող ենք փող ճարել:

— Չգիտեմ,– ասաց Էշլին,– որտեղի՞ց:

— Ես քեզ եմ հարցնում,– ասաց Սքարլեթը նեղսրտած: Թեթևության